ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-766[2]-23.01.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 61-րդ հոդվածի 4-րդ մասի «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության» բառերը փոխարինել «սույն» բառով.

Հոդված 2. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.

«9) նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 210-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «աշխատանքային պայմանագրի» բառերից հետո լրացնել « կամ անհատական իրավական ակտի», իսկ «փոփոխման, լուծման» բառերից հետո լրացնել «, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը» կետադրական նշանը և բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերով հայցադիմումը դատարան կարող է ներկայացվել համապատասխան

իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից կամ համապատասխան գործողության (անգործության) կատարման պահից սկսած մեկամսյա ժամկետում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 211-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «որոշում՝» բառից և կետադրական նշանից հետո լրացնել « ըստ անհրաժեշտության» բառերը.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով

«4) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերի դեպքում՝ տվյալ վեճի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:»

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճերի դեպքում գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:»:

Հոդված 5. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը «Վիճարկվող անհատական իրավական ակտի» բառերից հետո լրացնել « կամ գործողության (անգործության)» բառերով, «տվյալ անհատական իրավական ակտի ընդունման» բառերից հետո լրացնել « , գործողության կատարման» բառերով, իսկ « գործատուի» բառից հետո լրացնել « ,իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի» բառերով.

Հոդված 6. Օրենսրգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-ին կետը «համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը» բառերից հետո լրացնել « կամ անհատական իրավական ակտը» բառերով, իսկ « փոփոխելու, լուծելու»

բառերից հետո «, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, դրանից ազատելու» կետադրական նշանով և բառերով.

2) 2-րդ կետը «աշխատանքային պայմանագիրը» բառերից հետո լրացնել « կամ անհատական իրավական ակտը» բառերով, «ենթարկելու» բառից հետո լրացնել « , հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, դրանից ազատելու», իսկ «գործատու» բառից հետո «, իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի» բառերով.

Հոդված 7. Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «աշխատանքային հարաբերությունների» բառերից հետո լրացնել « , այդ թվում՝ հանրային կամ այլընտրանքային ծառայությունների» բառերով:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.3.-րդ գլխով.

«**Գ Լ ՈՒ Խ 27.3.**

ՆՈՏԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 234.13. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցադիմում ներկայացնելը

1. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան:

2. Նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու մասին հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմանալ վիճարկվող նոտարական գործողության կատարման մասին:

3. Նոտարական գործողության կատարման մերժումը վիճարկելու մասին հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նոտարը կայացրել է նոտարական գործողության մերժման մասին որոշում, իսկ նման որոշում չկայացնելու դեպքում՝ այդ որոշման կայացման համար օրենքով նախատեսված ժամկետն ավարտվելու օրվանից հետո:

4. Անձը նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ կարող է ներկայացնել նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարման մերժման իրավաչափությունը վիճարկելու պահանջի հետ միաժամանակ կամ երեք տարվա ընթացքում ՝ սկսած այն օրվանից, երբ սույն օրենսգրքի 234.17.-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի համաձայն կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

5. Սույն գլխով քննության ենթակա չեն նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու հետ կապված դիմումները:

Հոդված 234.14. Հայցադիմումին ներկայացվող պահանջները

1. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերով հայցադիմումում՝ ի լրումն սույն օրենսգրքի 121-րդ հոդվածով հայցադիմումին ներկայացվող պահանջների, նշվում է նաև նոտարական գործողությունը կատարելու կամ նոտարական գործողության կատարումը մերժելու ամսաթիվը, իսկ առանձին նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառած վնասի հատուցման պահանջի դեպքում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու օրը.

2. Սույն օրենսգրքի 234.13-րդ հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է հայցադիմումը:

Հոդված 234.15. Հայցադիմումը վարույթ ընդունելը և դատարանի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո

1. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից հայցադիմումում նշված նոտարական գործողությունը կատարելու կամ կատարումը մերժելու գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

2. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

3. Գործը դատաքննության նախապատրաստելիս դատարանը կարող է առաջարկել հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջները, համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ:

Հոդված 234.16. Ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնները

1. Նոտարական գործողության կատարման կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափության՝ օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

2. Պատասխանողը նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Հոդված 234.17. Դատարանի վճիռը

1. Նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ՝ նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները

վերացնելու վերաբերյալ, իսկ նման պահանջի և համապատասխան հիմքերի առկայության դեպքում նաև պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը:

2. Նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու և համապատասխան պահանջի առկայության դեպքում դատարանը պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը:

3. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում նոտարական գործողության հետևանքով հայցվորին պատճառված վնասը հատուցելու մասին:

Հոդված 234.18. Նոտարական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը

1. Նոտարական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցերը քննվում են սույն գլխով սահմանված կարգով:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-766-23.01.2024-ՊԻ-011/1 և Կ-766[1]-23.01.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության» օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 2-րդ հոդված**	Հաշվի առնելով այն, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ կարգավորված է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չգանձելու հարցը և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության» օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 57-րդ հոդվածի 1-ին մասը ինքնին բլանկետային հղում կատարելով «Պետական տուրքի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			մասին» օրենքին՝ հիշատակված նորմը վարչական դատավարության հարաբերությունների նկատմամբ դարձնում է կիրառելի, ինչպես նաև օրենսգիրքը հավելյալ չծանրաբեռնելու նպատակով առաջարկում ենք հանել նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 57-րդ հոդվածի 2-րդ մասը: Ըստ այդմ վերանայել վերոնշյալ հոդվածի մասերի համարակալումը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 4-րդ հոդված**	**Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող** Օրենսգրքի 73-րդ հոդվածի՝ 1-ին մասով փոփոխվող 2-րդ մասի 2-րդ կետի «հաշվառման (գտնվելու) հասցեն» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «հաշվառման հասցեից» բառերը՝ « հաշվառման վայրի հասցեից» բառերով. 2-րդ մասով փոփոխվող 3-րդ կետի «հաշվառման (գտնվելու) հասցեն» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով: Առաջարկի հիմքում ընկած է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի բավարարումը և միատեսակ տերմինաբանության օգտագործումը Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված փոփոխության արդյունքում Օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում կօգտագործվի «մշտական հաշվառման հասցե» ձևակերպումը, ուստի տեխնիկական վրիպակը վերացնելու և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը պահպանելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում ««բնակության վայրը»» բառերը փոխարինել ««մշտական բնակության վայրը»» բառերով, իսկ ««հաշվառման հասցեն»» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեն» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 7-րդ հոդված**	**Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվող** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «հաշվառման (գտնվելու) հասցեն» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «հաշվառման վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեն» բառերով. Առաջարկի հիմքում ընկած է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի բավարարումը և միատեսակ տերմինաբանության օգտագործումը Քաղաքացիական և	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Վարչական դատավարության օրենսգրքերում:		
5.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 10-րդ հոդված**	Օրենքի նախագծից հանել 10-րդ հոդվածը, համապատասխանեցնել հաջորդող հոդվածների համարակալումը և անցումային դրույթներում կատարված հղումները համապատասխանեցնել կատարված փոփոխություններին : Քանի որ Օրենքի նախագծով և գործող Վարչական դատավարության օրենսգրքով առկա չէ գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակելու եղանակից տարբերվող այլ կարգավորում, տվյալ պահին նման լրացում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, ուստի առաջարկվում է Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվող բացառությունը հանել Օրենքի նախագծից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 26-րդ հոդված**	165-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասի «45 օրվա» բառերը փոխարինել «երկու ամսվա» բառերով: Ներկայումս Վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է միայն, որ Վճռաբեկ դատարանը գործը քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում: Ընդ որում, այս կարգավորումը վերաբերում է ինչպես գործն ըստ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			էության լուծող դատական ակտերի հիման վրա բերված բողոքների քննությանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի և Վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքներին: Քանի որ միջանկյալ են հանդիսանում այն դատական ակտերը, որոնք ուղղված են առանձին դատավարական (ընթացակարգային) հարցերի և դատարանի առջև դրված միջանկյալ դատավարական խնդիրների լուծմանը, պայմաններ են ապահովում դատավարության հետագա զարգացման և վեճի ըստ էության լուծման համար, դրանց հիման վրա բերված վճռաբեկ բողոքների քննության ժամկետները պետք է տարբերվեն գործն ըստ էության լուծող դատական ակտերի հիման վրա վճռաբեկ բողոքների քննության ժամկետներից, ուստի Նախագծով առաջարկվել է Վերաքննիչ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի և Վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների քննության ժամկետ սահմանել դրանք վարույթ ընդունելուց հետո 45 օրը: Սակայն, հաշվի առնելով Վճռաբեկ		

			դատարանի վարչական պալատի ներկայիս ծանրաբեռնվածությունը, գտնում ենք, որ իրատեսական չէ Վերաքննիչ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի և Վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների քննության ժամկետ սահմանել դրանք վարույթ ընդունելուց հետո 45 օրը, և առաջարկում ենք, որպես ողջամիտ ժամկետ դիտարկել երկու ամիսը:		
7.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 33-րդ հոդված**	**Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվող** Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ մասի «հաշվառման (գտնվելու) հասցեն» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «հաշվառման վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեն» բառերով. Առաջարկի հիմքում ընկած է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի բավարարումը և միատեսակ տերմինաբանության օգտագործումը Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 34-րդ հոդված**	**Նախագծի 34-րդ հոդվածով նախատեսվող** Օրենսգրքի 222.5-րդ		

			հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բնակության վայրը» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեն» բառերով, իսկ «բառերով» բառից հետո լրացնել «, իսկ «բնակության վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեից» բառերով» բառերը: Առաջարկի հիմքում ընկած է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի բավարարումը և միատեսակ տերմինաբանության օգտագործումը Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերում:		
9.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 35-րդ հոդված**	2-րդ կետի «31-րդ» թվականը փոխարինել «28-րդ» թվականով: Տեխնիկական վրիպակը ուղղելու նպատակով առաջարկվում է 2-րդ կետի «31-րդ» հոդվածին հղումը փոխարինել «28-րդ» հոդվածին հղումով: Մասնավորապես, քանի որ նախագծի 31-րդ հոդվածը իր բովանդակությամբ միջանկյալ դատական ակտերի կարգավորմանն ուղղված կարգավորում չէ, իսկ նշված կետում հղում կատարված մնացած հոդվածները կարգավորում են միջանկյալ դատական ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու ժամկետները, անհրաժեշտ է վերացնել Նախագծում առկա	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			տեխնիկական վրիպակը և հղումը կատարել Նախագծի 28-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում որոշումների կայացման և հրապարակման համապատասխան հոդվածին:		
10	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն*** ***Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին հոդվածով՝ համապատասխանաբար փոխելով հաջորդող հոդվածների համարակալումը և անցումային դրույթներում կատարված հղումները համապատասխանեցնել կատարված փոփոխություններին: «**Հոդված 1.** 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել:»: Առաջարկի հիմքում ընկած է այն, որ հանրային և այլընտրանքային ծառայության հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով աշխատանքային հարաբերություններ են և դուրս չեն աշխատանքային օրենսդրության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կարգավորման շրջանակներից: Այսպես, և՛ գործող Աշխատանքային օրենսգիրքը, և՛ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը սահմանում են կարգավորումներ, համաձայն որոնց՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց հարաբերությունները՝ համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, և այլընտրանքային աշխատանքային ծառայողների մասով համապատասխան օրենքով չկարգավորված աշխատանքային հարաբերությունները, կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով, իսկ աշխատանքային վեճերը ենթակա են քննության քաղաքացիական դատավարության կարգով: Տվյալ մոտեցումը թե՛ Աշխատանքային օրենսգրքով, և թե՛ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով որդեգրվել է այն հիմնավորմամբ, որ ինչպես հանրային, այնպես էլ այլընտրանքային ծառայողի գործունեության հետ կապված հարցերը նրանց կարգավիճակից չբխելու դեպքում կրում են աշխատանքային բնույթ: Ուստի այն		

			դեպքերում, երբ համապատասխան օրենքները չունեն հատուկ կարգավորումներ հանրային կամ այլընտրանքային ծառայողի աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, դրանք կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ: Նշվածով է պայմանավորված նաև այն, որ հանրային կամ այլընտրանքային ծառայողի աշխատանքային հարաբերությունների ընթացքում ընդունվող ներքին և անհատական իրավական ակտերն ընդունվում են աշխատանքային հարաբերությունների ոլորտը կարգավորող օրենսդրության հիման վրա: Ուստի, հիմք ընդունելով վերը նշվածը, ինչպես նաև նպատակ հետապնդելով միատեսակ քննություն ապահովել ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտի աշխատողների աշխատանքային իրավահարաբերություններից բխող վեճերի համար՝ գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլինի հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն		

			իրականացնելու կամ ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի քննությունը վերապահել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարաններին և համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել Վարչական և Քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:		
11.	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն*** ***Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**նախագծի 11-րդ հոդված**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով. «Դատարանի կողմից սույն մասով նախատեսված գործողությունները սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին հոդվածով նախատեսված գործերով կատարելը բավարար է սույն օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի շրջանակներում պահանջվող բոլոր գործողությունները կատարված համարելու համար:»: Նշված առաջարկն ուղղված է ՀՀ վարչական դատարանի՝ պարտադիր	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			գրավոր ընթացակարգով քննվող գործերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության շրջանակում դատավարության մասնակցի՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան նոր ապացույց ներկայացնելու իրավունքի սահմանափակմանը՝ հաշվի առնելով, որ կողմերն այդպիսով արհեստականորեն շրջանցում են Վարչական դատարանում իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները գրավոր ընթացակարգ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում ներկայացնելու օրենսդրական պարտականությունը, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսանում դատական ակտերի բեկանման և Վարչական դատարանի ավելորդ և անհարկի ծանրաբեռնման: Այսպես, գործող Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսվում է, որ Վարչական դատարանը գործը գրավոր ընթացակարգով քննելու հարցը հայցադիմումը վարույթ ընդունելու		

			դեպքում այդ որոշման, իսկ, հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գրավոր ընթացակարգի անցնելու դեպքում առանձին որոշման հետ մեկտեղ դատավարության մասնակցին ուղարկվում է գրավոր պարզաբանում՝ Վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, այդ թվում՝ վարչական վարույթի բոլոր նյութերը ներկայացնելու, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին: Միաժամանակ, Վարչական դատավարության օրենսգրքի 118.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում են դատավարության մասնակիցների կողմից իրենց դիրքորոշման պաշտպանության համար առարկություններ, միջնորդություններ և ապացույցներ ներկայացնելու կարգը և ժամկետները, նախատեսելով, որ նշված մասով սահմանված պահանջները չկատարելու դեպքում դատավարության մասնակցի առարկությունները, միջնորդությունները և ապացույցները չեն ընդունվում և քննարկման		

			ենթակա չեն դատարանի կողմից: Այսինքն՝ Վարչական դատավարության օրենսգրքով արդեն իսկ սահմանված է, որ դատավարության մասնակիցները, եթե սահմանված մեկամսյա ժամկետում չեն ներկայացնում առարկություններ, միջնորդություններ և ապացույցներ, հետագայում կրում են դրա բացասական հետևանքները: Սակայն, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածով, որով սահմանվում են վերաքննության սահմանները Վերաքննիչ վարչական դատարանում, նախատեսվում է, որ Վերաքննիչ դատարանն ընդունում է օրենսգրքով կամ Վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից Վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Միաժամանակ, Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված է վարչադատավարական գործն ի պաշտոնե քննելու սկզբունքը, որի համաձայն՝ դատարանը կաշկանդված		

			չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Այլ կերպ՝ գործի փաստական հանգամանքներն "ex offi cio" պարզելու սկզբունքն ինքնին պարտավորեցնում է Վարչական դատարանին իր նախաձեռնությամբ պահանջելու գործի լուծման համար անհրաժեշտ բոլոր կամ առանձին ապացույցները: Հենց այս պարտականության չկատարման հիմքով էլ իրենց օրենսդրական պարտականությունը խախտած դատավարության կողմերը հետագայում ներկայացնում են վերաքննիչ բողոք՝ այդպիսով փորձելով շրջանցել իրենց կողմից ապացույց ներկայացնելու օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը: Ամփոփելով՝ մի կողմից օրենսգրքով		

			դատավարության կողմերի համար նախատեսված է որոշակի ժամկետի ավարտից հետո ապացույցներ ներկայացնելու համար բացասական հետևանքներ, այն է՝ դատարանի կողմից դրանք չքննարկելը, մյուս կողմից նույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում կողմը կարող է ներկայացնել նոր ապացույց: Այսինքն, գործնականում ստացվում է, որ դատարանի կողմից սահմանված ժամկետի ավարտից հետո ապացույցներ չընդունելը սկսում է կրել ձևական բնույթ, և այս իրավիճակի հետևանքով անհարկի ծանրաբեռնվում է Վարչական դատարանը: Ուստի, առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխությունները և վերացնել օրենսդրական բացը:		
12	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ հոդվածով՝ համապատասխանաբար փոխելով հաջորդող հոդվածների համարակալումը և անցումային դրույթներում կատարված հղումները համապատասխանեցնել կատարված փոփոխություններին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«**Հոդված 18.** Օրենսգրքի 144-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով. «2.1.Վերաքննիչ դատարանի կողմից ընդունման ենթակա չեն սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված գործերով սույն օրենսգրքով սահմանված ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավարության մասնակիցը ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական դատարան ներկայացնելու հնարավորությունից:»: Նշված առաջարկն ուղղված է ՀՀ վարչական դատարանի՝ պարտադիր գրավոր ընթացակարգով քննվող գործերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության շրջանակում դատավարության մասնակցի՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան նոր ապացույց ներկայացնելու իրավունքի սահմանափակմանը՝ հաշվի առնելով,		

			որ կողմերն այդպիսով արհեստականորեն շրջանցում են Վարչական դատարանում իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները գրավոր ընթացակարգ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում ներկայացնելու օրենսդրական պարտականությունը, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսանում դատական ակտերի բեկանման և Վարչական դատարանի ավելորդ և անհարկի ծանրաբեռնման: Այսպես, գործող Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսվում է, որ Վարչական դատարանը գործը գրավոր ընթացակարգով քննելու հարցը հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում այդ որոշման, իսկ, հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գրավոր ընթացակարգի անցնելու դեպքում առանձին որոշման հետ մեկտեղ դատավարության մասնակցին ուղարկվում է գրավոր պարզաբանում՝ Վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո կատարման ենթակա		

			գործողությունների, այդ թվում՝ վարչական վարույթի բոլոր նյութերը ներկայացնելու, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին: Միաժամանակ, Վարչական դատավարության օրենսգրքի 118.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանվում են դատավարության մասնակիցների կողմից իրենց դիրքորոշման պաշտպանության համար առարկություններ, միջնորդություններ և ապացույցներ ներկայացնելու կարգը և ժամկետները, նախատեսելով, որ նշված մասով սահմանված պահանջները չկատարելու դեպքում դատավարության մասնակցի առարկությունները, միջնորդությունները և ապացույցները չեն ընդունվում և քննարկման ենթակա չեն դատարանի կողմից: Այսինքն՝ Վարչական դատավարության օրենսգրքով արդեն իսկ սահմանված է, որ դատավարության մասնակիցները, եթե սահմանված մեկամսյա ժամկետում չեն ներկայացնում առարկություններ, միջնորդություններ և ապացույցներ, հետագայում կրում		

			են դրա բացասական հետևանքները: Սակայն, նույն օրենսգրքի 144-րդ հոդվածով, որով սահմանվում են վերաքննության սահմանները Վերաքննիչ վարչական դատարանում, նախատեսվում է, որ Վերաքննիչ դատարանն ընդունում է օրենսգրքով կամ Վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից Վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Միաժամանակ, Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված է վարչադատավարական գործն ի պաշտոնե քննելու սկզբունքը, որի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի		

			լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Այլ կերպ՝ գործի փաստական հանգամանքներն "ex officio" պարզելու սկզբունքն ինքնին պարտավորեցնում է Վարչական դատարանին իր նախաձեռնությամբ պահանջելու գործի լուծման համար անհրաժեշտ բոլոր կամ առանձին ապացույցները: Հենց այս պարտականության չկատարման հիմքով էլ իրենց օրենսդրական պարտականությունը խախտած դատավարության կողմերը հետագայում ներկայացնում են վերաքննիչ բողոք՝ այդպիսով փորձելով շրջանցել իրենց կողմից ապացույց ներկայացնելու օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը: Ամփոփելով՝ մի կողմից օրենսգրքով դատավարության կողմերի համար նախատեսված է որոշակի ժամկետի ավարտից հետո ապացույցներ ներկայացնելու համար բացասական հետևանքներ, այն է՝ դատարանի կողմից դրանք չքննարկելը, մյուս կողմից նույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում կողմը կարող է ներկայացնել նոր ապացույց:		

			Այսինքն, գործնականում ստացվում է, որ դատարանի կողմից սահմանված ժամկետի ավարտից հետո ապացույցներ չընդունելը սկսում է կրել ձևական բնույթ, և այս իրավիճակի հետևանքով անհարկի ծանրաբեռնվում է Վարչական դատարանը: Ուստի, առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխությունները և վերացնել օրենսդրական բացը:		
13	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35-րդ հոդվածով, համապատասխանաբար փոխել հաջորդող հոդվածների համարակալումները և անցումային դրույթներում կատարված հղումները համապատասխանեցնել կատարված փոփոխություններին: «**Հոդված 35.** Օրենսգրքի 31-րդ գլուխը ուժը կորցրած ճանաչել:» Նշված առաջարկի հիմքում ընկած է այն, որ թեև «Նոտարիատի մասին» օրենքի տրամաբանությամբ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			իրականացնող անձ է, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, չի իրականացնում վարչարարություն և ընդունում վարչական ակտեր: Նշվածը վկայում է այն մասին, որ նոտարը ինստիտուցիոնալ առումով վարչական մարմին չէ և օժտված չէ նաև այլ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակով : Նշվածով է պայմանավորված օրենսդրական կարգավորումն առ այն, որ նոտարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման հետևանքով պատճառված իրական վնասի համար: Միաժամանակ, հարկ է նկատել, որ դատական պրակտիկայի վերլուծությունը նույնպես վկայում է, որ բազմաթիվ գործերով վեճի առարկա են դառնում նոտարական գործողությունները, բայց դրանց նպատակը քաղաքացիական վեճի լուծումն է:		

			Ուստի հիմք ընդունելով ներկայացվածը՝ առաջարկում ենք նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննությունը վերապահել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:		
14	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**նախագծի 35-րդ հոդված**	Նախագծի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-րդ մասերով, համապատասխանաբար փոխել հաջորդող մասերի համարակալումները. «2. Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: 3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և 18-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:»: Նշված կարգավորումների նախատեսման նպատակն է ապահովել վարչական և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների բնականոն աշխատանքը և կարագավորումներով առաջարկվող հոդվածներով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			կատարվող փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել ավելի երկար:		
15	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը**	Նախագիծը լրացնել հարակից օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ** **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 10.** Հայաստանի Հանրապետության 2018 թվա փետրվարի 9-ի քաղաքացի դատավարության օրենսգրքի (այսո Օրենսգիրք) 61-րդ հոդվածի 4-րդ «Հայաստանի Հանրապետության վարչ դատավարության» բառերը փոխա «սույն» բառով.	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Հոդված 11. Օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասը լրացնել հե բովանդակությամբ 9-րդ կետով. «9) նոտարի գործողությու իրավաչափությունը վիճարկելու վերա գործերը:»: **Հոդված 12.** 210-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի «աշխատան պայմանագրի» բառերից հետո լրացնել անհատական իրավական ակտի», «փոփոխման, լուծման» բառերից լրացնել «, հանրայի՝ այլընտրանքային ծառայության անցնելո իրականացնելու, ծառայությունից ազա հետ կապված վեճերը» կետադրական և բառերը. 2) լրացնել հե բովանդակությամբ 1.1.-ին մասով. «1.1. Հանրային կամ այլընտրան ծառայության անցնելու, այն իրականաց ծառայությունից ազատելու կարգապահական պատասխանատվո ենթարկելու հետ կապված վե հայցադիմումը դատարան կարո ներկայացվել համապատասխան իրավ ակտը ուժի մեջ մտնելու պահից համապատասխան գործողո (անգործության) կատարման պահից		

			մեկամսյա ժամկետում:»: **Հոդված 13.** Օրենսգրքի հոդվածի՝ 1) 2-րդ մասում «որոշում՝» բ և կետադրական նշանից հետո լրացնել անհրաժեշտության» բառերը. 2) 2-րդ մասը լրացնել հե բովանդակությամբ 4-րդ կետով «4) հանրային կամ այլընտրան ծառայության անցնելու, այն իրականաց ծառայությունից ազատելու կարգապահական պատասխանատվո ենթարկելու հետ կապված վեճերի դե տվյալ վեճի հետ կապված՝ պատասխ տիրապետման տակ գտնվող ապացույցները:» 3) լրացնել հե բովանդակությամբ 5-րդ մասով. «5. Հանրային կամ այլընտրան ծառայության անցնելու, այն իրականաց ծառայությունից ազատելու կարգապահական պատասխանատվո ենթարկելու հետ կապված վեճերի դե գործի փաստական հանգման դատարանը պարզում է ի պաշտոնե officio”): Դատարանը կաշկանդվա դատավարության մասնակի ներկայացրած ապացույցն միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկությունն		

			և իր նախաձեռնությամբ ձեռնարկ համարժեք միջոցներ՝ կոնկրետ լուծմանն անհրաժեշտ իրական փաս վերաբերյալ հնարավոր և հաս տեղեկություններ ձեռք բերելու համար:» **Հոդված 14.** Օրենսգրքի 1 հոդվածի 1-ին մասը «Վիճա անհատական իրավական ակտի» բա հետո լրացնել « կամ գործողո (անգործության)» բառերով, « անհատական իրավական ակտի ընդուն բառերից հետո լրացնել « , գործողո կատարման» բառերով, իսկ « գործա բառից հետո լրացնել « ,իրավասու մ կամ պաշտոնատար անձի» բառերով. **Հոդված 15.** Օրենսրգրքի 1 հոդվածի 2-րդ մասի՝ 1) 1-ին «համապատասխանաբար աշխատան պայմանագիրը» բառերից հետո լրաց կամ անհատական իրավական ա բառերով, իսկ « փոփոխելու, լու բառերից հետո «, հանրային այլընտրանքային ծառայության անց դրանից ազատելու» կետադրական նշա բառերով. 2) 2-րդ կետը «աշխատան պայմանագիրը» բառերից հետո լրաց կամ անհատական իրավական ա		

			բառերով, «ենթարկելու» բառից լրացնել « , հանրային կամ այլընտրան ծառայության անցնելու, դրանից ազաս իսկ «գործատու» բառից հետո «, իրա մարմնի կամ պաշտոնատար բառերով. **Հոդված 16.** Օրենսգրքի 3 հոդվածի 1-ին մասի 4-րդ «աշխատանքային հարաբերություն բառերից հետո լրացնել « , այդ հանրային կամ այլընտրան ծառայությունների» բառերով: **Հոդված 17.** Օրենսգիրքը լր հետևյալ բովանդակությամբ 27.3.-րդ գլ «**Գ Լ ՈՒ Խ 27.3.** ***ՆՈՏԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ*** **Հոդված 234.13. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցադիմում ներկայացնելը** 1. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության		

			կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ հայցադիմումը ներկայացվում է հայցվորի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: 2. Նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու մասին հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմանալ վիճարկվող նոտարական գործողության կատարման մասին: 3. Նոտարական գործողության կատարման մերժումը վիճարկելու մասին հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նոտարը կայացրել է նոտարական գործողության մերժման մասին որոշում, իսկ նման որոշում չկայացնելու դեպքում՝ այդ որոշման կայացման համար օրենքով նախատեսված ժամկետն ավարտվելու օրվանից հետո: 4. Անձը նոտարական գործողության կամ նոտարական		

			գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ կարող է ներկայացնել նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարման մերժման իրավաչափությունը վիճարկելու պահանջի հետ միաժամանակ կամ երեք տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ սույն օրենսգրքի 234.17.-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի համաձայն կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: 5. Սույն գլխով քննության ենթակա չեն նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու հետ կապված դիմումները: **Հոդված 234.14. Հայցադիմումին ներկայացվող պահանջները** 1. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերով		

			հայցադիմումում՝ ի լրումն սույն օրենսգրքի 121-րդ հոդվածով հայցադիմումին ներկայացվող պահանջների, նշվում է նաև նոտարական գործողությունը կատարելու կամ նոտարական գործողության կատարումը մերժելու ամսաթիվը, իսկ առանձին նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառած վնասի հատուցման պահանջի դեպքում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու օրը. 2. Սույն օրենսգրքի 234.13-րդ հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է հայցադիմումը: **Հոդված 234.15. Հայցադիմումը վարույթ ընդունելը և դատարանի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո** 1. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝		

			պատասխանողից հայցադիմումում նշված նոտարական գործողությունը կատարելու կամ կատարումը մերժելու գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին: 2. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: 3. Գործը դատաքննության նախապատրաստելիս դատարանը կարող է առաջարկել հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջները, համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ: **Հոդված 234.16. Ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնները** 1. Նոտարական գործողության կատարման կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափության՝ օրենքով, այլ		

			իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: 2. Պատասխանողը նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: **Հոդված 234.17. Դատարանի վճիռը** 1. Նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ՝ նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, իսկ նման պահանջի և համապատասխան հիմքերի առկայության դեպքում նաև պարտավորեցնում է նոտարին		

			կատարելու հայցվող գործողությունը: 2. Նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու և համապատասխան պահանջի առկայության դեպքում դատարանը պարտավորեցնում է նոտարին կատարելու հայցվող գործողությունը: 3. Նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերով հայցը բավարարելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում նոտարական գործողության հետևանքով հայցվորին պատճառված վնասը հատուցելու մասին: **Հոդված 234.18. Նոտարական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը** 1. Նոտարական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը վիճարկելու		

			վերաբերյալ հայցերը քննվում են սույն գլխով սահմանված կարգով:»: **Հոդված 18.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:»: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումները տե՛ս սույն ամփոփաթերթի 10-րդ և 13-րդ կետերում:		
16	***Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Պատգամավոր՝ Տրդատ Նորիկի Սարգսյան***	**««Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը**	Նախագիծը լրացնել հարակից օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նոր օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը **«տեխնիկական կանոնակարգման մասին» հայաստանի**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին **Հոդված 1.** «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի «դատական կարգով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով: **Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:» Առաջարկի հիմքում ընկած է այն, որ «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 20-րդ կետերի համաձայն՝ համապատասխանության գնահատման մարմին է հանդիսանում համապատասխանության գնահատման ծառայություն՝ տրամաչափարկում, փորձարկում, սերտիֆիկացում և տեխնիկական հսկողություն մատուցող, իսկ համապատասխանության գնահատման նշանակված մարմին է հանդիսանում տեխնիկական		

			կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման ծառայություն մատուցող մարմինը: Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման ընթացակարգը, չափանիշները և դեպքերը սահմանված են Կառավարարության կողմից: Մասնավորապես, Կառավարության 13.06.2013 թվականի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը, չափանիշները և դեպքերը» թիվ 623-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ նշված կարգով և չափանիշներով կարգավորվում են տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման ծառայություն մատուցելու համապատասխանության գնահատման մարմնի նշանակման չափանիշների, ընթացակարգերի հետ կապված հարաբերությունները, նշանակման դեպքերը, և համապատասխանության գնահատման մարմին կարող են նշանակվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված իրավաբանական այն անձինք, որոնք բավարարում են տվյալ կարգով սահմանված		

			պահանջներին: Նշվածներից հետևում է, որ համապատասխանության գնահատում իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինը, որը հանդիսանում է իրավաբանական անձ, մինչդեռ Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր գործերը: Այսինքն՝ Վարչական դատարան կարող են ներկայացվել միայն հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի պահանջները, իսկ վերը թվարկված կարգավորումների հստակ սահմանումից բխում է, որ համապատասխանության գնահատման մարմինը հանդիսանում է իրավաբանական անձ և չի հանդիսանում իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ: Ուստի տվյալ դեպքերում վեճը ծագում է ոչ թե իշխանական լիազորություններով օժտված վարչական մարմնի և մասնավոր անձի միջև, այլ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտ		

			հանդիսացող կազմակերպության (իրավաբանական անձի) և մասնավոր անձի միջև: Նշյալ հիմնավորմամբ էլ անհրաժեշտ է համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարել օրենսդրական փոփոխություն՝ հստակ սահմանելով, որ նշված մարմնի հետ կապված վեճերը քննության առարկա կարող են դառնալ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:		
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
17	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 1-ին հոդված**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «97^{2}, 97^{3},» թվերը, «206^{5}, 206^{10}, 206^{11}, $206^{12,}$ 206^{13}, 206.16, 206.14 հոդվածներով» բառերը փոխարինել « 206.16-րդ հոդվածով» բառերով , իսկ «189.9-189.10» թվերը փոխարինել «189.9» թվով:» Առաջարկը կրում է տեխնիկական բնույթ և հիմքում ընկած է այն, որ ներկայումս Վարչական իրավախախտումների վերաբերյալ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասը ունի հետևյալ ձևակերպումը. «սույն օրենսգրքի 41.5, 97^{2}, 97^{3}, 147, 172.3 հոդվածներով, 180^{1}, 182, 183^{1}, 189^{2} -189^{6}, 189.9-189.10, 189.25, 189.26-189.28 հոդվածներով, 198^{2} հոդվածի չորրորդ մասով և 206^{5}, 206^{10}, 206^{11}, 206^{12}, 206^{13}, **206.16, 206.14** հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.» Այսինքն, գործող օրենսգրքում ինկորպորացվել է սկզբում 206.16, ապա 206.14-րդ հոդվածը և արդյունքում ստեղծվել է իրավիճակ, երբ հոդվածների համարակալումները միմյանց չեն հաջորդում ըստ հերթականության: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվել է օրենսգրքից հանել «206^{5}, 206^{10}, 206^{11}, 206^{12}, 206^{13}, 206.14» թվերը: Այսինքն՝ Նախագծի 1-ին հոդվածով 223-րդ հոդվածի 1-ին մասում հղում կատարված հոդվածները շարադրված են ըստ համարակալումների հերթականության: Ուստի Նախագծի 1-ին հոդվածով		

			նախատեսվող փոփոխությունները Օրենսգրքի գործող տարբերակի ինկորպորացիային համապատասխանեցնելու համար առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ:		
18	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 4-րդ հոդված**	Հաշվի առնելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում արդեն իսկ առկա է 244.19-րդ հոդված առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքում լրացվող «244.19.-244.21» հոդվածների համարակալումները փոխել «244.20-.244.22» համարակալումներով՝ համապատասխանաբար փոխելով նոր լրացվող հոդվածների հերթական համարակալումները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
19	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 5-րդ հոդված**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասից հանել «6-րդ և» թիվը և շաղկապը: Առաջարկի հիմքում ընկած է այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189^{2} -189^{6} -րդ հոդվածներով նախատեսված	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով լեզվի պետական տեսչության իրավասությունը՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմելու և դատարան ներկայացնելու մասին: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ուժը կորցրած ճանաչելու պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 189^{2} -189^{6} -րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով գործի քննությունն իրականացնող իրավասու մարմին այլևս չի նախատեսվի, ինչը կառաջացնի իրավական բաց: Ուստի առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի «6-րդ և» թիվը և շաղկապը հանել:		